

պատմագիրները. միայն Թեոփանես կը գրէ Պասուլ. բս Saint-Martinի բացատրութեան, որովհետեւ արաբերէնն փութի վալ գիրը շատ կը նմանի միտ գիրին. Վահան հայերէն անունը կարդացուած է Մահան արաբ հեղինակներէն, նոյնպէս Թեոփանես՝ որ Վահանի մէկ ուրիշ կոչւը կը նկարագրէ, Պասուլ կ'անուանէ զանիկա: Caussin մատենագիրը (III. IX. էջ 435) բացէ ի բաց կը գրէ Մահանին Վահանին հետ նոյնութիւնը:

Saint-Martin Վահանին ազգասոհմը կը նշուի (Տե՛ս Lebeau, Hist. du Bas-Empire, ԺԱ. գիրք, էջ 208) եւ կ'ընդունի զայն Մամիկոնեանց նախարարութեան սերունդ, վասն զի Վահան անունով բազմաթիւ անձեր կը գտնուին նոյն տոհմին մէջ. եւ արդարեւ ան բիւզանդական բանակին մէջ իր ֆաշուրիներովը հաստատեց թէ ֆաշուրով սերունդի մը զաւակն էր: Ուրեմն որո՞ւ է թէ Վահան՝ Մամիկոնեան էր եւ ո՛չ թէ Խոռխոռունի, ինչպէս կը կարծէ Հ. Ն. Ակիմեան (Տե՛ս Յանայ, 1931, ք. 1481): Եւսիփիոսի վերջին տողերը բանկագին են, վասն զի ան կը նշուի պատերազմիկ հայ Վահանի Սինա Լեւան վանքը ֆաշուրիլը այն պատճառներով՝ որ վերեւ պարզուեցաւ եւ հոն վանական դառնալով կրօնական գրականութեամբ զբաղիլը. եւ անոր անունին Անաստասի փոխուիլը ունի անսարակոյս իր ֆաշուրական պատճառները: Ուրեմն Անաստաս անուն անկ պէտք է հանչուալ է. դարու առաջին ֆաշուրիկն ապրող Վահան Մամիկոնեանը՝ բիւզանդական արեւելեան բանակին մեծ հրամանատարը: Վանք ֆաշուրի յետոյ ան սուրի ու ապարի տեղ կը կրէ խաչն ու գրիչը: Մեր Ձեռագրաց Մատենադարանին մէջ նոյն Անաստաս վանականին անունով կը գտնուի Աղօթագիրք մը (ք. 1130), որ մեկնութիւնն է վեցերորդ Սարգսի, ինչպէս Եւսիփիոսն ալ յիշեց, եւ անսարակոյս ունեցած է նաեւ ուրիշ կրօնական աշխատութիւններ:

Անաստաս վանական Երուսաղէմի Հայոց վանքերուն ցուցակագրութիւնը հաւանական է որ կատարած է 634ին, այսինքն Երուսաղէմի նահապարհով Սինայի վանքը ֆաշուած միջոցին, թերեւս մէկ երկու տարի ալ մնալով Երուսաղէմ: Անոր ցուցակագրած վանքերն էին անոնք՝ որ Պարսից արեւաւմեհէն յետոյ Մոսեսոսի վերաշինութեան ժամանակ նորոգուեցան, առաստձեռնութեամբն ա՛յն ուխտաւորաց եւ իշխանաց՝ որոնք կը յիշուին Հայոց Կովտաս կաթողիկոսին կողմէն Մոսեսոսին գրուած նամակին